

(չուեցին): Եւ յետ երթալոյն իշխանացն մեծատանցն, ' իՍիս մնացեալ աղքատք եւ չքաւորք՝ որ ոչ ունէին զկարողութիւն փախչելոյ՝ ետուն զՍիս, յունիսի վեց»: Անուանք պարոնայցն եւ երիցանց, աւուրց եօթնեկի եւ ամսոյ՝ տան գուշակել հաւատարիմ աղբիւր՝ յորմէ հաւաքեալ է զդէպքս հեղինակ ժամանակագրութեանս. եւ յաւէտ հետաքննելի մնայ՝ ինմին՝ անձն Պր. Կարապետի արքայթոռին: Բայց առաւել յերկբայս հարկանէ միւս եւս աւանդութիւն նորին՝ յայլմէ աղբերէ, որ յամի 1423-4 «վերջ տայ թագաւորութեան Կիլիկեցոց. թագաւորեաց ասէ Կոստանդին 48 ամ... եւ ասէն թէ թագաւորն՝ ի Կիպրոս անցաւ, եւ ընդ նոսին (նմին) բազում իշխանք, իւրաքանչիւր տոհմականօքն հանդերձ. զի եկն՝ ի վերայ նոցա Մուլթանն Եգիպտոսի Մուզէֆերն²⁵³, եւ ոչ կարացին զդէմ ունել. վասն որոյ 30,000 տուն անցան յայնկոյս ծովուն, որպէս՝ ի վերագոյն գրեցաք... Եւ եղեն՝ ի Մեծ Լեւոնէ մինչեւ՝ ի սոյն թիւն՝ ամք 226, եւ թագաւորք 13»: Հաւանագոյն եւ դիպողագոյն երեւի զաղութ Հայոց՝ ի Կիպրոս. թուականքն՝ ճշգրիտ են, զի յ'ամէ թագաւորութեան մեծին Լեւոնի ցայս թուական (1424) լինին ստոյգ 226 ամք. նոյնպէս եւ սկիզբն 48 ամաց ընծայելոց Կոստանդինի՝ ժամանէ յամն գերութեան Լեւոնի վերջնոյ. զթիւ թագաւորացն եւս մարթ է ստոյգ 13 հաշուել²⁵⁴. այլ երկբայելի յոյժ մնայ ինքն

²⁵³ Ոչ յայս անուն կոչի սուլտան ժամանակին, այլ թերեւս մի ՚ի մականուանց նոցին իցէ եւ այս:

²⁵⁴ Ժամանակագիրն Կիլիկիոյ՝ որ ոչ համարի ընդ թագաւորս զերեսին եղբարս Հեթմոյ եւ Օշնի՝ զԹորոս, զՄմբատ եւ զԿոստանդին,

« ~~Թոյնագրութեանց~~ Կոստանդինի զորդի մարաջախտին իւր զՊաղտընին», եւ այլն. շփոթելով ընդ Լիւզինեանն Կիտի (*), ~~թեւոյնն~~ այլ զժամանակ թագաւորութեանն. զի երկուս ամս ասէ թագաւորեալ, որպէս եւ Կիտն, եւ սպանեալ

« եղբայր Կիտի սպանեալ ընդ նմին. եւ ապա յարէ. «Եւ թագաւորեցուցին զմիւս Կոստանդին՝ յայլմէ ցեղէ, ՚ի ՉՂԳ Հայոց (թուին). եւ բարձաւ թագաւորութիւն ՚ի տանէն Լեւոնի եւ Հեթմոյ, զկնի 150 ամի թագաւորութեան Լեւոնի Առաջնոյ. եւ թագաւորք ինն, որ են այսոքիկ. Լեւոն. փեսայն Ֆիլիպ. դարձեալ փեսայն Լեւոնի Հեթում. որդին Լեւոն. որդին Հեթում, Փոքր Լեւոն որդին Թորոսի. Օշին՝ Լեւոնի Բ որդի. որդին Լեւոն Դ. զկնի՝ ազգական նոցա Կոստանդին. եւ ապա Կոստանդին յայլմէ ազգէ»:– Վասն սորա ասէ, ՚ի թուին ՊԵ (1356-7) «

12 ~~ինմիջադրեալն~~ Եղև մահտար ~~նմիջադրեալն~~ և թաղեցաւ ~~որ ոչ մնաց ի~~

զՊարոն Հեթմոյ որդին զմիւս Կոստանդին, ' ~~ի 5)ՊԺԳ (1364~~ որ ոչ մնաց ի
Այսպէս պարապ թողով զմիջոց ուր ամաց (ՊԵ-ՊԺԳ), յետոյ ասէ, առանց յիշելոյ զմահն, ՚ի ՊԻԲ թվին (1373) «Յետ ինն ամի թագաւորութեան Բ Կոստանդեայ թագաւորին (ինքն երիս յիշեաց Կոստանդինս) որդւոյ Հեթմոյ, թագաւորէ որդին! Լեւոն.